ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԵՎ ՌԵՖԼԵՔՍԻՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՏԱԹԵՎԻԿ ՄԱԼՈՒՄՅԱՆ

Թումանյանի անվան ՎՊՀ

Էլ. հասցե՝ *malumyant@gmail.com*

DOI: *10.24234/scientific.v3i53.401*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների զարգացման առանձնահատկությունները: Նախադպրոցական տարիքը երեխայի հուզական և անձնային զարգացման կարևոր փուլ է, որի ընթացքում ձևավորվում են սեփական և այլոց հուզական վիճակները ճանաչելու, տարբերակելու և հասկանալու, սեփական ապրումները գիտակցելու, վարքային արձագանքները գնահատելու և սոցիալական իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունները: Այս համատեքստում հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների զարգացումը կարող է դիտարկվել որպես երեխայի հուզական ինքնակարգավորման, ինքնաճանաչման և արդյունավետ սոցիալական փոխազդեցության կարևոր նախադրյալ:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ավագ նախադպրոցականների հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների առանձնահատկությունները և գնահատել դրանց զարգացմանն ուղղված նպատակային աշխատանքի արդյունքները: Հետազոտությանը մասնակցել է 60 երեխա՝ փորձարարական (n=30) և վերահսկիչ (n=30) խմբերում: Հուզական ինտելեկտի գնահատման համար կիրառվել է Գ. Ա. Ուրունտաևայի և Յու. Ա. Աֆոնկինայի «Նկարների միջոցով մարդկանց հուզական վիճակների ըմբռնման ուսումնասիրման մեթոդիկան»: Ռեֆլեքսիվ կարողությունների գնահատման նպատակով հետազոտության

շրջանակներում մշակվել է 11 բաց հարցից կազմված հեղինակային հարցարան: Հետազոտությունն իրականացվել է նախաթեստ–զարգացնող միջամտություն–հետթեստ սխեմայով:

Ստացված արդյունքները վկայում են, որ հուզական ինտելեկտի ուսումնասիրված բաղադրիչների և ռեֆլեքսիվ կարողությունների միասնական զարգացմանն ուղղված նպատակային աշխատանքը ավագ նախադպրոցական տարիքում ուղեկցվում է երկու ոլորտների արտահայտված դրական դինամիկայով և կարող է նպատակահարմար լինել հոգեբանամանկավարժական զարգացման ծրագրերում կիրառելու համար:

Հիմնաբառեր՝ *հուզական ինտելեկտ, ռեֆլեքսիա, ռեֆլեքսիվ կարողություններ, նախադպրոցական տարիք, հուզական զարգացում, ինքնագիտակցություն, զարգացնող աշխատանք*:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից զարգացման հոգեբանության շրջանակներում երեխայի լիարժեք զարգացումը չի սահմանափակվում միայն ճանաչողական գործընթացների ձևավորմամբ: Հուզական և անձնային ոլորտների զարգացումը կարևոր նշանակություն ունի երեխայի սոցիալականացման, միջանձնային հարաբերությունների կառուցման, սեփական վարքի կարգավորման և սոցիալական միջավայրին հարմարվելու գործընթացներում:

Նախադպրոցական տարիքը հոգեկան զարգացման կարևոր փուլ է, որի ընթացքում էական փոփոխություններ են տեղի ունենում երեխայի անձնային և հուզական ոլորտներում: Լ. Ս. Վիգոտսկու մշակութապատմական մոտեցման շրջանակներում բարձրագույն հոգեկան գործառույթների զարգացումը դիտարկվում է սոցիալական փոխազդեցությունների և դրանց աստիճանական ինտերիորիզացիայի համատեքստում (Выготский, 2004): Լ. Ի. Բոժովիչի աշխատություններում երեխայի անձի ձևավորումը կապվում է նրա պահանջմունքների, ապրումների, դրդապատճառների և սոցիալական հարաբերությունների համակարգի զարգացման հետ (Божович, 1968):

Դ. Բ. Էլկոնինը նախադպրոցական տարիքի հոգեբանական զարգացման մեջ առանձնահատուկ նշանակություն է տալիս խաղային գործունեությանը, որի շրջանակներում երեխան յուրացնում է սոցիալական դերերը, վարքային նորմերը և մարդկանց միջև հարաբերությունների համակարգը (Эльконин, 2007): Ա. Վ. Զապորոժեցի աշխատություններում երեխայի հուզական ոլորտի զարգացումը ևս

դիտարկվում է գործունեության, սոցիալական փոխազդեցությունների և սոցիալական փորձի յուրացման համատեքստում (Запорожец, 1986):

Նախադպրոցական տարիքի հուզական զարգացման ուսումնասիրության համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի հուզական ինտելեկտի խնդիրը: Հուզական ինտելեկտի վերաբերյալ տեսական մոտեցումները տարբեր են, սակայն դրանց ընդհանուր առանցքը սեփական և այլոց հույզերի ճանաչման, հասկացման, արտահայտման և կարգավորման կարողություններն են: Ռ. Բար-Օնի մոտեցման շրջանակներում հուզական ինտելեկտը դիտարկվում է անձի հուզական և սոցիալական կարողությունների համակարգում (Бар-Он, 1997):

Ի. Ն. Անդրեևան հուզական ինտելեկտը ներկայացնում է որպես բազմաբաղադրիչ հոգեբանական կազմավորում՝ ընդգրկելով սեփական և այլ անձանց հույզերի ճանաչման, ըմբռնման և կառավարման կարողությունները (Андреева, 2011; Андреева, 2017):

Ա. Վ. Կարպովի և Ա. Ս. Պետրովսկայայի մոտեցման մեջ հուզական ինտելեկտի խնդիրը դիտարկվում է անձի հոգեկան կազմակերպման ավելի լայն համակարգում՝ կարևորելով հուզական տեղեկատվության ընկալման, մշակման և կարգավորման մեխանիզմները (Карпов, Петровская, 2008): Կ. Է. Իզարդի աշխատություններում հույզերը դիտարկվում են որպես մարդու վարքի և գործունեության կարգավորման նշանակալի հոգեբանական համակարգ, ինչն ընդգծում է հուզական փորձի ճանաչման և տարբերակման կարևորությունը դեռևս մանկության շրջանում (Изард, 2000):

Հուզական ինտելեկտի զարգացումը նախադպրոցական տարիքում ենթադրում է ոչ միայն հույզերի արտաքին դրսևորումների ճանաչում և անվանում, այլև դրանց պատճառների ըմբռնում, սեփական հուզական արձագանքների գիտակցում և այլ անձի ապրումների հետ իրավիճակի կապի ընկալում: Հենց այս մակարդակում հուզական ինտելեկտի խնդիրը առնչվում է երեխայի ռեֆլեքսիվ կարողությունների ձևավորմանը:

Ռեֆլեքսիան հոգեբանական գրականության մեջ դիտարկվում է որպես անձի՝ սեփական հոգեկան գործընթացները, վիճակները, գործողությունները և դրանց հիմքերը գիտակցելու ու վերլուծելու կարողություն: Ս. Յու. Ստեպանովի և Ի. Ն. Սեմյոնովի աշխատություններում ռեֆլեքսիան ներկայացվում է որպես հոգեկան գործունեության կարևոր մեխանիզմ, որի միջոցով հնարավոր է սեփական գործունեության բովանդակության և եղանակների վերաիմաստավորումը (Степанов, Семенов, 1985):

Ա. Վ. Կարպովը ռեֆլեքսիվությունը դիտարկում է նաև որպես անհատական հոգեբանական հատկություն (Карпов, 2003), իսկ Ա. Վ. Կարպովի և Ի. Մ. Սկիտյաևայի աշխատություններում ռեֆլեքսիան ներկայացվում է որպես բարդ և բազմամակարդակ հոգեբանական երևույթ (Карпов, Скитяева, 2001): Ռեֆլեքսիայի

ձևավորման նախադրյալները ի հայտ են գալիս դեռևս մանկության շրջանում: Ն. Ի. Լյուրիայի ուսումնասիրությունը վերաբերում է ռեֆլեքսիվ գիտելիքի զարգացման հոգեբանական առանձնահատկություններին նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում (Люрья, 1997):

Հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների միջև կարելի է առանձնացնել տեսականորեն հիմնավորված փոխկապակցվածություն: Հույզը ճանաչելը դեռևս չի նշանակում դրա լիարժեք գիտակցում: Հուզական փորձի առավել բարդ մակարդակում երեխան պետք է կարողանա հասկանալ, թե ինչու է առաջացել տվյալ հույզը, ինչ վարքային արձագանքի է այն հանգեցրել, ինչպես է իր գործողությունն ազդում մյուսի վրա և ինչպես կարելի է գնահատել սեփական արձագանքը: Հետևաբար ռեֆլեքսիվ կարողությունները կարող են հանդես գալ որպես սեփական և այլոց հուզական փորձի իմաստավորման կարևոր հոգեբանական մեխանիզմ:

Խնդիրը հատկապես արդիական է ավագ նախադպրոցական տարիքում, երբ ընդլայնվում է երեխայի սոցիալական փոխազդեցությունների շրջանակը, բարդանում են հասակակիցների հետ հարաբերությունները և մեծանում են սեփական վարքը հասկանալու ու կարգավորելու պահանջները: Ուստի կարևոր է ոչ միայն գնահատել հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների առկա մակարդակը, այլև ուսումնասիրել դրանց նպատակային զարգացման հնարավորությունները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների առանձնահատկությունները և գնահատել դրանց զարգացմանն ուղղված նպատակային աշխատանքի արդյունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությանը մասնակցել է ավագ նախադպրոցական տարիքի 60 երեխա: Մասնակիցները կազմել են երկու հավասար խմբեր՝ փորձարարական (n=30) և վերահսկիչ (n=30):

Մասնակիցների ընտրության ժամանակ հաշվի է առնվել, որ երեխաները հաճախեն նախադպրոցական հաստատություն և անցած լինեն հարմարման շրջանը: Հետազոտության ընթացքում հաշվի են առնվել երեխաների հուզական վիճակը և հետազոտական առաջադրանքներին մասնակցելու պատրաստակամությունը: Սեռային պատկանելիությունը որպես առանձին հետազոտական փոփոխական չի դիտարկվել:

Հետազոտությունն իրականացվել է նախաթեստ–զարգացնող միջամտություն–հետթեստ սխեմայով: Փորձարարական խմբում նախնական գնահատումից հետո իրականացվել է հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների զարգացմանն ուղղված նպատակային աշխատանք: Վերահսկիչ խմբում իրականացվել են

նախնական և վերջնական չափումներ՝ առանց համապատասխան զարգացնող միջամտության:

Հուզական ինտելեկտի գնահատումը

Հուզական ինտելեկտի ուսումնասիրման համար կիրառվել է Գ. Ա. Ուրունտաևայի և Յու. Ա. Աֆոնկինայի՝ «Մարդկանց հուզական վիճակների, նկարների միջոցով ըմբռնման ուսումնասիրման մեթոդիկան» (Урунтаева, Афонькина, 1995, с. 90–91):

Մեթոդիկան հնարավորություն է տալիս գնահատել երեխայի՝ հուզական վիճակները ճանաչելու և տարբերակելու, ինչպես նաև սոցիալական իրավիճակների հուզական բովանդակությունն ընկալելու կարողությունը: Առաջին փուլում երեխային ներկայացվում են տարբեր հուզական վիճակներ պատկերող նկարներ և գնահատվում է դեմքի արտահայտության հիման վրա հույզերը ճանաչելու ու տարբերակելու կարողությունը: Երկրորդ փուլում ներկայացվում են սյուժետային նկարներ, որոնց միջոցով գնահատվում են սոցիալական իրավիճակը մեկնաբանելու, պատկերված անձանց հուզական վիճակները հասկանալու և տեղի ունեցածի նկատմամբ սեփական վերաբերմունքն արտահայտելու կարողությունները:

Ստացված արդյունքների հիման վրա առանձնացվել են հուզական ինտելեկտի բարձր, միջին և ցածր մակարդակներ:

Ռեֆլեքսիվ կարողությունների գնահատումը

Ավագ նախադպրոցականների ռեֆլեքսիվ կարողությունների ուսումնասիրման նպատակով հետազոտության շրջանակներում մշակվել է «Նախադպրոցականի ռեֆլեքսիվ կարողությունների գնահատման հեղինակային հարցարան»:

Հարցարանի տեսական հիմքում դրվել են ռեֆլեքսիայի՝ որպես սեփական հոգեկան վիճակների, ապրումների, գործողությունների և դրանց պատճառների գիտակցման ու իմաստավորման գործընթացի վերաբերյալ մոտեցումները (Степанов, Семенов, 1985; Карпов, Скитяева, 2001; Карпов, 2003), ինչպես նաև մանկական տարիքում ռեֆլեքսիվ գիտելիքի զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունները (Люрия, 1997):

Հարցարանը նախատեսված է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համար և իրականացվում է անհատական կիսակառուցվածքային զրույցի ձևով: Այն ներառում է 11 բաց հարց, որոնք ընդգրկում են չորս բովանդակային ոլորտ՝ ինքնաճանաչում, հուզական ռեֆլեքսիա, սեփական վարքի և հուզական արձագանքների ռեֆլեքսիա, սոցիալական և միջանձնային ռեֆլեքսիա:

Հարցարանը հետազոտության շրջանակներում մշակված հեղինակային գործիք է և չի ներկայացվում որպես ստանդարտացված հոգեախտորոշիչ մեթոդիկա:

Զարգացնող աշխատանքի կազմակերպումը

Փորձարարական խմբում իրականացվել է հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների զարգացմանն ուղղված նպատակային աշխատանք:

Փորձարարական խմբում հուզական ինտելեկտի առանձին բաղադրիչների և ռեֆլեքսիվ կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքն իրականացվել է 12 շաբաթվա ընթացքում՝ շաբաթական երկու անգամ: Յուրաքանչյուր ուղղության շրջանակում իրականացվել է 24 հանդիպում՝ յուրաքանչյուր հանդիպումը 30 րոպե տևողությամբ: Հուզական ինտելեկտի զարգացմանն ուղղված աշխատանքը կենտրոնացած է եղել հույզերի ճանաչման, տարբերակման և սոցիալական իրավիճակներում հուզական վիճակների ըմբռնման վրա, իսկ ռեֆլեքսիվ կարողությունների զարգացման աշխատանքը՝ սեփական հուզական վիճակների, վարքային արձագանքների, դրանց պատճառների և հետևանքների գիտակցման ու իմաստավորման վրա:

Զարգացնող աշխատանքի ընթացքում կիրառվել են հույզերի ճանաչման և անվանման, հուզական վիճակների պատճառների քննարկման, սոցիալական իրավիճակների վերլուծության, սեփական և այլոց վարքային արձագանքների իմաստավորման և սեփական փորձի բանավոր արտահայտմանն ուղղված առաջադրանքներ:

Ծրագրի ավարտից հետո իրականացվել է հետթեստավորում՝ կիրառելով նախաթեստային փուլում օգտագործված նույն գնահատման գործիքները: Հետթեստավորումն իրականացվել է նախնական հետազոտությանը հնարավորինս համարժեք պայմաններում՝ երեխաների համար հանգիստ, անվտանգ և ծանոթ միջավայրում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նախաթեստավորման փուլում գնահատվել են փորձարարական և վերահսկիչ խմբերի երեխաների հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների մակարդակները: Արդյունքները ներկայացվել են աղյուսակի տեսքով՝ ըստ երեխաների թվի և տոկոսային հարաբերության:(Աղյուսակ 1.).

Աղյուսակ 1.

Հուզական ինտելեկտի նախաթեստային արդյունքները

Մակարդակ	**Փորձարարական խումբ (n=30)**	**Վերահսկիչ խումբ (n=30)**
Բարձր	20% (6)	23.33% (7)
Միջին	56.67% (17)	50% (15)
Ցածր	23.33% (7)	26.67% (8)

Նախնական արդյունքները ցույց են տալիս, որ երկու խմբերում էլ գերակշռել է հուզական ինտելեկտի միջին մակարդակը: Բաշխումների նկարագրական

համեմատությունը ցույց է տալիս, որ նախաթեստավորման փուլում խմբերի ցուցանիշները մոտ են եղել միմյանց:

Փորձարարական խմբում, հուզական ինտելեկտի զարգացմանը միտված նպատակային աշխատանքներից հետո, իրականացված հետթեստավորման արդյունքները ներկայացված են աղյուսակի տեսքով: Տվյալների համեմատության համար նույն աղյուսակում ներկայացված են նաև վերահսկիչ խմբի նախաթեստավորման և հետթեստավորման արյունքները (Աղյուսակ 2.).

Աղյուսակ 2.

Հուզական ինտելեկտի նախաթեստային և հետթեստային արդյունքները

Մակարդակ	**Փորձարարական նախաթեստ**	**Փորձարարական հետթեստ**	**Վերահսկիչ նախաթեստ**	**Վերահսկիչ հետթեստ**
Բարձր	20% (6)	70% (21)	23.33% (7)	23.33% (7)
Միջին	56.67% (17)	30% (9)	50% (15)	50% (15)
Ցածր	23.33% (7)	0% (0)	26.67% (8)	26.67% (8)

Զարգացնող աշխատանքից հետո փորձարարական խմբում նկատվում է հուզական ինտելեկտի ուսումնասիրված բաղադրիչների արտահայտված դրական դինամիկա: Բարձր մակարդակ ունեցող երեխաների թիվը 6-ից աճել է մինչև 21՝ կազմելով խմբի 70%-ը, մինչդեռ ցածր մակարդակ ունեցող երեխաներ հետթեստավորման փուլում չեն արձանագրվել: Միջին մակարդակի մասնաբաժնի նվազումը 56.67%-ից մինչև 30% այս դեպքում չի կարող մեկնաբանվել որպես բացասական փոփոխություն, քանի որ այն ուղեկցվել է բարձր մակարդակի զգալի աճով: Այսինքն՝ երեխաների մի մասի արդյունքները միջին մակարդակից տեղափոխվել են բարձր մակարդակի տիրույթ:

Ռեֆլեքսիվ կարողությունների արդյունքները

Ռեֆլեքսիվ կարողությունների նախնական գնահատման ժամանակ գրանցված արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 3.

Ռեֆլեքսիվ կարողությունների նախաթեստային արդյունքները

Մակարդակ	Փորձարարական խումբ (n=30)	Վերահսկիչ խումբ (n=30)
Բարձր	6.67% (2)	3.33% (1)
Միջին	63.33% (19)	56.67% (17)
Ցածր	30% (9)	40% (12)

Երկու խմբերում էլ նախնական փուլում գերակշռել է ռեֆլեքսիվ կարողությունների միջին մակարդակը, մինչդեռ բարձր մակարդակի ցուցանիշը համեմատաբար փոքր է եղել:

Հետթեստավորման ժամանակ փորձարարական խմբում բարձր մակարդակ է արձանագրվել երեխաների 56.67%-ի (n=17), միջին՝ 43.33%-ի (n=13) մոտ, իսկ ցածր մակարդակ չի արձանագրվել:

Վերահսկիչ խմբում ցուցանիշները պահպանվել են՝ բարձր՝ 3.33% (n=1), միջին՝ 56.67% (n=17), ցածր՝ 40% (n=12): Արդյունքները ներկայացված են աղյուսակում: (Աղյուսակ 4.)

Աղյուսակ 4.

Ռեֆլեքսիվ կարողությունների նախաթեստային և հետթեստային արդյունքները

Մակարդակ	Փորձարական՝ նախաթեստ	Փորձարական՝ հետթեստ	Վերահսկիչ՝ նախաթեստ	Վերահսկիչ՝ հետթեստ
Բարձր	6.67% (2)	56.67% (17)	3.33% (1)	3.33% (1)
Միջին	63.33% (19)	43.33% (13)	56.67% (17)	56.67% (17)
Ցածր	30% (9)	0% (0)	40% (12)	40% (12)

Փորձարարական խմբում ռեֆլեքսիվ կարողությունների բարձր մակարդակի մասնաբաժինը աճել է 6.67%-ից մինչև 56.67%, իսկ ցածր մակարդակը 30%-ից նվազել է մինչև 0%:

Ստացված դինամիկան տեսականորեն համահունչ է ռեֆլեքսիայի վերաբերյալ այն մոտեցումներին, որոնցում այն դիտարկվում է որպես սեփական գործողությունների, ապրումների և դրանց հիմքերի գիտակցման ու վերաիմաստավորման հոգեբանական մեխանիզմ (Степанов, Семенов, 1985; Карпов, 2003; Карпов, Скитяева, 2001):

Հուզական ինտելեկտի և ռեֆլեքսիվ կարողությունների ցուցանիշներում արձանագրված միաժամանակյա դրական փոփոխությունները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ հույզերի ճանաչման և անվանման աշխատանքը նպատակահարմար է համադրել սեփական և այլոց ապրումների պատճառների, վարքային արձագանքների և դրանց հետևանքների քննարկման հետ: Այս դեպքում երեխան ոչ միայն սովորում է ճանաչել հույզը, այլև աստիճանաբար անցնում է դրա իմաստավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական տեսանկյունից նպատակահարմար է նախադպրոցականների հուզական և անձնային զարգացման ծրագրերում կիրառել համակցված մոտեցում, որտեղ հուզական ինտելեկտի բաղադրիչների զարգացումը զուգակցվում է ռեֆլեքսիվ կարողությունների ձևավորման հետ: Նման աշխատանքը կարող է նպաստել երեխայի առավել գիտակցված հուզական արձագանքմանը, սեփական և այլոց ապրումների ավելի ամբողջական ըմբռնմանը, ինչպես նաև սոցիալական փոխազդեցության համար անհրաժեշտ հոգեբանական կարողությունների զարգացմանը:

Այսպիսով, հետազոտության արդյունքները փաստում են, որ հուզական ինտելեկտի ուսումնասիրված բաղադրիչների և ռեֆլեքսիվ կարողությունների միասնական զարգացմանն ուղղված կազմակերպված, հետևողական և նպատակային աշխատանքը ավագ նախադպրոցական տարիքում ապահովում է երկու ոլորտների արտահայտված դրական դինամիկա: Ստացված արդյունքները կարևորում են ոչ միայն հույզերի ճանաչման և տարբերակման առանձին զարգացումը, այլև դրանց համադրումը երեխայի ինքնաճանաչման, սեփական վարքի ու ապրումների գիտակցման և սոցիալական իրավիճակների իմաստավորման հետ:

Հատկանշական է, որ դրական դինամիկան միաժամանակ արձանագրվել է երկու փոխկապակցված հոգեբանական ոլորտներում: Հուզական վիճակների ճանաչումն ու ըմբռնումը և սեփական ու այլոց ապրումների ռեֆլեքսիվ իմաստավորումը զարգացման գործընթացում, կարող են փոխլրացնել միմյանց: Երեխան ոչ միայն սովորում է ճանաչել և տարբերակել հույզերը, այլև աստիճանաբար ձեռք է բերում դրանց պատճառները, վարքային դրսևորումները և հետևանքները հասկանալու ու իմաստավորելու կարողություն:

Ռեֆլեքսիվ կարողությունների դեպքում ևս արձանագրվել է արտահայտված դրական տեղաշարժ. բարձր մակարդակի մասնաբաժինը 6.67%-ից հասել է 56.67%-ի, իսկ ցածր մակարդակը 30%-ից նվազել է մինչև 0%: Ստացված փոփոխությունները ցույց են տալիս երեխաների՝ սեփական հուզական վիճակները և վարքային արձագանքները գիտակցելու, դրանց պատճառներն ու հետևանքները

իմաստավորելու, ինչպես նաև սեփական և այլոց ապրումների ու գործողությունների միջև կապեր հաստատելու կարողությունների զարգացումը:

Հուզական ինտելեկտի ուսումնասիրված բաղադրիչների դեպքում փորձարարական խմբում բարձր մակարդակ ունեցող երեխաների մասնաբաժինը 20%-ից աճել է մինչև 70%, իսկ ցածր մակարդակը 23.33%-ից նվազել է մինչև 0%: Այս փոփոխությունները վկայում են երեխաների՝ հուզական վիճակները ճանաչելու, տարբերակելու և սոցիալական իրավիճակներում դրանց բովանդակությունն առավել ամբողջական հասկանալու կարողությունների զարգացման մասին:

Հետազոտության սկզբնական փուլում փորձարարական և վերահսկիչ խմբերում ուսումնասիրվող ցուցանիշների մակարդակային բաշխումները ընդհանուր առմամբ մոտ էին: Զարգացնող աշխատանքից հետո փորձարարական խմբում արձանագրվել է երկու ուսումնասիրվող հատկանիշների արտահայտված դրական դինամիկա, մինչդեռ վերահսկիչ խմբում համապատասխան փոփոխություններ չեն արձանագրվել:

Իրականացված տեսական և փորձարարական ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ավագ նախադպրոցական տարիքը կարևոր և սենսիտիվ շրջան է երեխայի հուզական և անձնային ոլորտների զարգացման համար, երբ նպատակային ու համակարգված հոգեբանամանկավարժական աշխատանքը կարող է նպաստել հուզական ինտելեկտի ուսումնասիրված բաղադրիչների և ռեֆլեքսիվ կարողությունների ակտիվ զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Андреева И. Н. (2011). Эмоциональный интеллект как феномен современной психологии. Новополоцк.

Андреева И. Н. (2017). Структура и типология эмоционального интеллекта. Минск.

Бар-Он Р. (1997). Эмоциональный коэффициент.

Божович Л. И. (1968). Личность и ее формирование в детском возрасте. М.: Просвещение.

Выготский Л. С. (2004). Психология развития ребенка. М.: Смысл; Эксмо.

Запорожец А. В. (1986). Избранные психологические труды. Т. II. М.: Педагогика.

Изард К. Э. (2000). Психология эмоций. СПб.: Питер.

Карпов А. В. (2003). Рефлексивность как психическое свойство и методика ее диагностики. Психологический журнал. *24*(5).

Карпов А. В. **Петровская А. С**. (2008). Психология эмоционального интеллекта. Ярославль.

Карпов А. В., Скитяева И. М. (2001). Психология рефлексии. М.; Ярославль: Ин-т психологии РАН.

Люрья Н. И. (1997). Психологические особенности развития рефлексивного знания в дошкольном и младшем школьном возрасте. М.

Степанов С. Ю., Семенов И. Н. (1985). Психология рефлексии: проблемы и исследования. *Вопросы психологии*. (*3*).

Урунтаева Г. А., Афонькина Ю. А. (1995). Практикум по детской психологии. под ред. Г. А. Урунтаевой. М.: Просвещение: Владос.

Эльконин Д. Б. (2007). Детская психология. М.: Академия.

REFERENCE LIST

Andreeva I. N. (2011). Emocional'nyj intellekt kak fenomen sovremennoj psihologii *(Emotional intelligence as a phenomenon of modern psychology)*. Novopolock.

Andreeva I. N. (2017). Struktura i tipologiya emocional'nogo intellekta *(Structure and typology of emotional intelligence)*. Minsk.

Bar-On R. (1997). Emocional'nyj coefficient *(Emotional quotient)*.

Bozhovich L. I. (1968). Lichnost' i ee formirovanie v detskom vozraste *(Personality and its formation in childhood)*. M.: Prosveshchenie.

El'konin D. B. (2007). Detskaya psihologiya *(Child psychology)*. M.: Akademiya.

Izard K. E. (2000). Psihologiya emocij *(Psychology of emotions)*. SPb.: Piter.

Karpov A. V. (2003). Refleksivnost' kak psihicheskoe svojstvo i metodika ee diagnostiki *(Reflexivity as a psychological trait and a methodology for its assessment)*. Psihologicheskij zhurnal. 24(5).

Karpov A. V. **Petrovskaya A. S**. (2008). Psihologiya emocional'nogo intellekta *(The Psychology of Emotional Intelligence)*. YAroslavl'.

Karpov A. V., Skityaeva I. M. (2001). Psihologiya refleksii *(The Psychology of Reflection)*. M.; YAroslavl': In-t psihologii RAN.

Lyur'ya N. I. (1997). Psihologicheskie osobennosti razvitiya refleksivnogo znaniya v doshkol'nom i mladshem shkol'nom vozraste *(Psychological features of the development of reflective knowledge during the preschool and primary school years)*. M.

Stepanov S. YU., Semenov I. N. (1985). Psihologiya refleksii: problemy i issledovaniya *(The Psychology of Reflection: Issues and Research)*. Voprosy psihologii. (3).

Uruntaeva G. A., Afon'kina YU. A. (1995). Praktikum po detskoj psihologii *(Workshop in Child Psychology)*. pod red. G. A. Uruntaevoj. M.: Prosveshchenie: Vlados.

Vygotskij L. S. (2004). Psihologiya razvitiya rebenka *(Child Development*

Psychology). M.: Smysl; Eksmo.

Zaporozhec A. V. (1986). Izbrannye psihologicheskie Trudy *(Selected Psychological Works)*. T. II. M.: Pedagogika.

РЕЗЮМЕ

ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ РАЗВИТИЯ ЭМОЦИОНАЛЬНОГО ИНТЕЛЛЕКТА И РЕФЛЕКСИВНЫХ СПОСОБНОСТЕЙ У СТАРШИХ ДОШКОЛЬНИКОВ

Татевик Малумян

В статье рассматриваются особенности развития эмоционального интеллекта и рефлексивных способностей у детей старшего дошкольного возраста. Дошкольный возраст является важным этапом эмоционального и личностного развития ребенка, в течение которого формируются способности распознавать и дифференцировать собственные эмоциональные состояния и эмоции других людей, понимать причины переживаний, осмысливать собственные поведенческие реакции и ориентироваться в социальных ситуациях.

Цель исследования заключается в изучении особенностей эмоционального интеллекта и рефлексивных способностей старших дошкольников, а также в оценке результатов целенаправленной развивающей работы. В исследовании приняли участие 60 детей, распределенных на экспериментальную и контрольную. Для исследования эмоционального интеллекта использовалась методика Г. А. Урунтаевой и Ю. А. Афонькиной, направленная на изучение понимания эмоциональных состояний людей по изображениям. Для оценки рефлексивных способностей в рамках исследования был разработан авторский опросник.Исследование проводилось по схеме «предтест — развивающее воздействие — посттест».

Сравнительный анализ выявил положительную динамику исследуемых показателей в экспериментальной группе. Полученные результаты свидетельствуют о том, что организованная и систематическая работа, направленная на совместное развитие изученных компонентов эмоционального интеллекта и рефлексивных

способностей, сопровождается выраженной положительной динамикой обоих направлений. Это обосновывает целесообразность интегрированного подхода в программах психологического развития детей старшего дошкольного возраста.

***Ключевые слова**: эмоциональный интеллект, рефлексия, рефлексивные способности, дошкольный возраст, эмоциональное развитие, самосознание.*

SUMMARY

EXPERIMENTAL STUDY OF THE DEVELOPMENT OF EMOTIONAL INTELLIGENCE AND REFLECTIVE ABILITIES IN SENIOR PRESCHOOL CHILDREN

Tatevik Malumyan

The article examines the development of emotional intelligence and reflective abilities in older preschool children. Preschool age is an important period of emotional and personal development during which children gradually acquire the ability to recognize and differentiate their own and others' emotional states, understand the causes of emotional experiences, reflect on their behavioral responses, and interpret social situations.

The aim of the study was to examine emotional intelligence and reflective abilities in older preschool children and to assess the outcomes of a targeted developmental intervention. The sample consisted of 60 children divided into an experimental group, and a control group. Emotional intelligence was assessed using G. A. Uruntaeva and Yu. A. Afonkina's method for studying children's understanding of emotional states through pictures. To assess reflective abilities, an author-developed questionnaire. The study followed a pretest–intervention–posttest design.

The findings show that organized and systematic developmental work combining selected components of emotional intelligence with reflective abilities is associated with pronounced positive changes in both domains. The results support the professional relevance of an integrated approach in preschool psychological programs.

***Keywords**: emotional intelligence, reflection, reflective abilities, preschool age, emotional development, self-awareness.*

Հոդվածը ստացվել է՝ 25.07.2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 27.07.2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 22.08.2026